Ճապոներեն բանավոր խոսքի 14-րդ մրցույթը

Հոկտեմբերի 11-ին, Երևանում տեղի ունեցավ Ճապոներեն լեզվի ուսուցիչների հայկական ասոցիացիայի կողմից կազմակերպված և Ճապոնիայի դեսպանատան աջակցությամբ անցկացվող ճապոներեն բանավոր խոսքի 14-րդ մրցույթը: Դեսպան Առկին մասնակցեց որպես ժյուրիի գլխավոր անդամ:

Մրցույթին մասնակցեցին ութ ուսանողներ՝ ելույթ ունենալով տարբեր թեմաներով: Ռուս-Հայկական համալսարանի չորրորդ կուրսի ուսանողուհի Լիլիա Հովսեփյանը գրավեց առաջին տեղը իր «Հոգու լեզուն» վերնագրով ելույթով և պարգևատրվեց առաջնության գավաթով դեսպան Առկիի կողմից: Երևանի պետական համալսարանի երկրորդ կուրսի ուսանողուհի Սիրանուշ Մկրտչյանը գրավեց երկրորդ տեղը իր «Ժպիտի ետևում թաքնված ճշմարտությունը» ելույթով: Ռուս-Հայկական համալսարանի երկրորդ կուրսի ուսանողուհի Սուսաննա Հովսեփյանը զբաղեցրեց երրորդ տեղը իր «Ճապոնական մշակույթի ուսումնասիրությունը կարատեի միջոցով» ելույթով:

Մենք բարձր ենք գնահատում բոլոր մասնակիցների ջանքերը և սրտանց շնորհավորում ենք հաղթողներին:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ՀԱՊՈՆԵՐԵՆ ԴՊՐՈՅԻ ՄՈՒԶԵՈՒ
14-ՐԴ ՄՐՑՈՒՅԹ